+«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

«Արմավիրի Ռ. Եղոյանի անվան N1 ավագ դպրոց» ՊՈԱԿ

ՊԱՐՏԱԴԻՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեմա՝ ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՏԱՃԱՆԱՉՈՂՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Առանկա՝ Ինֆորմատիկա

Հետազոտող ուսուցիչ՝ Գինոսյան Համլետ Միխաելի

Դպրոց << Ամասիայի միջնակարգ դպրոց >>ՊՈԱԿ

Վերապատրաստող ՝ Մովսիսյան Անահիտ

ԱՐՄԱՎԻՐ- 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....3

Գլուխ.1 ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՏԱՃԱՆԱՉՈՂՈՒԹՅԱՆ ՎՐԱ

1.1 Միջառարկանական կապերի ստեղծման կարևորությունը սովորողների մետաճանաչողության զարգացման համատեքստում.....5

1.2 Միջառարկայական կապերի ստեղծման ներգործությունը սովորողի աշխարհաճանաչողության և աշխարհընկալման վրա.....12

Եզրակացություններ.....15

Առաջարկություններ.....17

Օգտագործված գրականության ցանկ.....18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հաշվի առնելով կրթության արդիականացման հիմնական ուղղությունները, որոնք կենտրոնացած չեն միայն գիտելիքի վրա, այլ ուսումնական գործընթացի արդյունքների մեջ ներառում են նաև մի շարք կարողունակությունների ձեռքբերում՝ կարող ենք ասել, որ դասը, որպես ուսումնական գործընթացի կազմակերպման հիմնական ձև, ձեռք է բերել բովանդակային նոր կառուցվածք:

Այդ կառուցվածքի զանազան տարրերը հնարավորություն են ստեղծում սովորողին դասից վերցնել ավելին քան գիտելիքն է: Սովորողը դասի մեջ գտնում է հետաքրքրություններ, նորություններ, ինքնուրույնություն, ստեղծելու, հորինելու, նախագծելու հնարավորություն: Ուստի պատահական չէ, որ այսօր հանրակրթության հիմնական նպատակներից մեկը սովորողների մետաճանաչողության զարգացումն է:

Առհասարակ ճանաչողական գործունեության արդյունքում սովորողը հնարավորություն է ստանում յուրացնել առարկայի բովանդակությունը, իմանալ յուրացման համար անհրաժեշտ մեթոդները, հմտություններն ու կարողությունները: Ճանաչողական գործունեության առկայությունը հոգեբանական գործոն է, որն ապահովում է ուսումնական նպատակների իրագործումը:

Ուսումնական գործընթացում սովորողների մղումները ձևավորվում են նրանց կարիքների և հետաքրքրությունների հիմքով՝ ուսուցիչը պետք է բոլոր ջանքերն ուղղի սովորողների ճանաչողական հետաքրքրությունների զարգացմանը: Ճանաչողական գործընթացներ են՝ ընկալումը, ուշադրությունը, երևակայությունը, հիշողությունը, մտածողությունը, որոնք ցանկացած գործունեության կարևորագույն բաղադրիչներն են: Իր կարիքները բավարարելու՝ շփվելու, սովորելու և աշխատելու համար մարդը պետք է ընկալի աշխարհը, ուշադրություն դարձնի գործունեության որոշակի բաղադրիչների վրա, պատկերացնի, թե ինչ է պետք անել, հիշի, մտածի և արտահայտվի: Հետևաբար, առանց ճանաչողական կարողությունների, մարդու

գործունեությունը անհնար է: Ճանաչողական կարողությունները զարգանում են գործունեության մեջ :

Այս նկատառումներից ելնելով՝ կարող ենք ասել, որ սովորողի մետաճանաչողության զարգացման համար բավականին արդյունավետ միջոց է ուսումնական գործընթացում միջառարկայական կապերի կիրառումը: Միջառարկայական կապերի օգտագործումը առավել դյուրին է դարձնում աշակերտների հետաքրքրությունների , աշխարհայացքի ձևավորման և այլ խնդիրների լուծումը:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ դասի ընթացքում միջառարկայական կապերի ճիշտ համադրումն ու կիրառումը սովորողին տալիս է հնարավորություն մեկ դասի շրջանակներում ստանալ մի շարք կարողունակություններ, գործնական աշխատանքների ժամանակ կիրառել դրանք, ինչի արդյունքում, վստահաբար, զարգանում է վերջինիս մետաճանաչողությունը:

Հետազոտության թեմայի արդիականությունը: Սույն հետազոտության արդիականության համար հիմք է հանդիսացել ուսումնական գործընթացում գիտելիքից բացի ճանաչողական կարողություններով սովորողին ապահովելու անհրաժեշտությունը, ինչը, կարծում ենք, խիստ կարևոր հանգամանք է 21-րդ դարի մարդու կենսագործունեության համար:

Հետազոտության նպատակը: Ցույց տալ դասի ընթացքում ուսուցչի կողմից միջառարկայական կապերի ստեղծման նշանակությունը սովորողների մետաճանաչողության զարգացման համար:

Հետազոտության խնդիրը: Հետազոտության խնդիրն է ցույց տալ միջառարկայական կապերի ստեղծման, ինտեգրված դասերի օգնությամբ սովորողների մետաճանաչողության զարգացման եղանակներն ու ուղիները:

Գլուխ.1 ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՏԱՃԱՆԱՉՈՂՈՒԹՅԱՆ ՎՐԱ

1.1 Միջառարկանական կապերի ստեղծման կարևորությունը սովորողների մետաճանաչողության զարգացման համատեքստում

Այսօր գիտելիքից բացի սովորողից պահանջվում են մի շարք այլ կարողունակություններ, որոնք թույլ կտան վերջինիս ճիշտ դրսևորվել, կողմնորոշվել կյանքի ցանկացած իրավիճակում, ինչը, կարծում ենք, պակաս կարևոր չէ: Սովորողը պետք է լինի ճկուն, կարողանա ընտրել, համեմատել, պարզաբանել, հիմնավորել, փաստարկել, հետազոտել ու կշռադատել: Այս ամենն իմանալն ու կարողանալը, կնշանակի՝ ունենալ գիտակցական բարձր մակարդակ, ճանաչողական կարողություններ, ինչն էլ այսօր կարևոր է կրթական համակարգում:

Անձի համակողմանի զարգացումն իրենից ենթադրում է, որ ցանկացած դժվարություն, ներառյալ նրանք, որոնք գերազանցում են նախկինում հաղթահարածը, մարդ կարող է կառավարել, հենվել իր իմացական ու գործառական ներուժի վրա ու հաղթահարել, ուստի և կրթության արդիականացման հիմքը հենց ինքնուրույն, նախաձեռնող ու նորարար սովորող ունենալու վերջնարդյունքն է: Այս բոլոր գործընթացներում իր դերն ունի հարակրթական ուսումնական հաստատությունը, ուսուցիչը, ճիշտ պլանավորած դասը, որտեղ սովորողը կարող է բացահայտել աշխարհն ու ինքն իրեն:

Ճանաչողական կարողությունները միմյանցից առանձին չեն դրսևորվում, սա մի բարդ համակարգ է, ուստի դրանց զարգացման արդյունավետ ուղիներից մեկը համագործակցային մոտեցումներն են՝ ի դեմս ինտեգրված դասի: Օրինակ՝ լեզուների ուսումնասիրության ժամանակ սովորողների մոտ ձևավորվում են բարդ ճանաչողական ունակություններ, որոնք հիմք են դառնում մտածողության, խոսքի և հաղորդակցման հմտությունների ձևավորման համար:

Հաջորդիվ մյուս առարկաների ուսուցման ընթացքում այդ լեզվամտածողությունը հիմք է դառնում այլ կարողունակությունների զարգացման: Կարող ենք ասել, որ ցանկացած ուսումնական առարկա փոխլրացնում է մեկը մյուսին, դառնում շարունակողը, լրացնողը, ամբողջացնողը: Նորօրյա աշխարհում մեծ նշանակություն ունի առարկաների և գիտությունների համագործակցությունը՝ միջառարկայական կապերը:

Ուսուցման արդյունավետությունը բարձրացնում են ոչ թե մեխանիկորեն սերտած ինտեգրացված տեղեկություններով, այլ իրականություն միջառարկայական կապերով: Ուսուցման արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է ոչ թե ինտեգրացում, այլ ուսումնական առարկաների ընթացակարգային կորդինացում միջառարկայական կապերի, որոնք արտացոլում են բնության և հասարակության մեջ առկա կապերը[1]: Ուստի կարող ենք ասել, որ միջառարկայական կապերն էլ ավելի արդյունավետ են իրականացվում, երբ ուսուցիչը տեսական հատվածին տրամաբանական շարունակություն է ապահովում գործնական հանձնարարություններ տալով: Սա, իհարկե, խթանում է նաև մետաճանաչողության զարգացմանը:

Ինչպես նշեցինք, միջառարկայական կապեր ստեղծելու արդյունավետ եղանակ է ինտեգրված դասերի անցկացումը: Ինտեգրված դասը դասի հատուկ տեսակ է, որի շրջանակներում մեկ հասկացության ուսուցման ժամանակտեղի է ունենում մի քանի առարկաների միաժամանակյա ուսուցումը: Այսպիսի դասի ընթացքում միշտ առանձնացվում է առաջատար առարկան, որը հանդես է գալիս որպես ինտեգրիչ, որը նպաստում է ուսուցանվող նյութի խորացմանը, ընդլայնմանն ու հստակեցմանը: Ինտեգրված դասերը կարող են միավորել ինչպես տարբեր առարկաներն իրենց ամբողջ ծավալով, այնպես էլ առանձին առարկաների բաղադրիչներ: Ինտեգրված դասի պլանավորումը ենթադրում է տարբեր առարկաների ուսուցիչների համագործակցություն:

[1] И. П. Подласый. Педагогика начальной школы, М. 2000, с. 233.

Տարբեր առարկաներից վերցրած բաղադրիչները, որոնք միավորվում են մեկ դասի մեջ, կազմում են մեկ համակարգ, որի շուրջ հավաքվում և մի նոր համակարգ է դառնում ուսումնական նյութը: Որպեսզի ինտեգրվեն, այսինքն՝ ճիշտ ձևով միավորվեն ուսումնական գործընթացի բաղադրիչները, պետք է կատարվեն այնպիսի գործողություններ, որոնք ի սկզբանե ունեն ստեղծագործական բնույթ:

Այս նախապատրաստական գործունեության ընթացքում առանցքային նշանակություն ունեն ուսուցիչների համագործակցելու, իրարից սովորելու, ընդհանուր նպատակներ ու խնդիրնել գտնելու կարողությունները: Այսպիսով, ելնելով ինտեգրված դասի տեսակից և ինտեգրվող առարկաների դասերի տիպերից, ուսուցիչները համատեղ կազմում են իրենց դասի նպատակները՝ զուգակցելով ընդհանուրը մասնավորի հետ, շաղկապելով ինտեգրվող նյութի բովանդակությունները տարբեր առարկաների տեսանկյուններից:

Նման դասերի ժամանակ կարելի է իրավիճակներ ստեղծել, որ սովորողը մտածի և ինքնուրույն հասկանա առաջադրված խնդրի լուծման եղանակները: Այս գործընթացի ժամանակ վերջինիս մեծապես կարող է օգնել մետաճանաչողությունը: Զարգացած մետաճանաչողություն ունեցող սովորողը ջանք է գործադրում խնդրի տեսակը ճանաչելու, առաջադրանքը վերլուծելու, իրեն արդեն իսկ ծանոթ խնդիրների հետ համեմատելու, նմանությունները և տարբերությունները որոշելու հարցում, իսկ մյուս դեպքում՝ այն արդեն իսկ մետաճանաչողական փորձի առկայություն է ենթադրում, երբ աշակերտը, առանց ջանք գործադրելու, կարողանում է որոշել խնդրի լուծման համար անհրաժեշտ ճանապարհը[2]:

Մետաճանաչողության հետ սերտորեն կապված է ինքնանդրադարձը: Դասի ժամանակ սովորողը պետք է անընդհատ հնարավորություն ունենա ինքնանդրադարձ կատարելու: Օրինակ՝ պատկերացնենք մի այսպիսի իրավիճակ, երբ ինֆորմատիկայի դասին ուսուցիչը միջին դպրոցում միջառարկայական կապ է ստեղծում աշխարհագրություն առարկայի հետ: Նախօրոք պատրաստած տեսասահիկն ունի հետևյալ բովանդակությունը՝ սահիկաշարի միջոցով ուսուցիչը պատմում է Ամերիկայի Միացյալ նահանգների տեսարժան վայրերի մասին: Սահիկի

[2] http://geopolitika.am/dir/wp-content/blogs.dir/1/files/2021_6_117_119.pdf Մետաճանաչողությունը կրթության մեջ:

դիտումից հետո խնդրում է, որ հատուկ թերթիկների վրա գրեն նկարագրական տեքստ իրենց ծանոթ վայրերից մեկի մասին, որոք քիչ առաջ ներկայացվեցին սահիկի մեջ: Մետաճանաչողությունն այս պարագայում կօգնի սովորողներին մոբիլիզացնել իրենց ողջ ներուժը, հիշել, թե նախկինում երբ, կամ ինչ հանգամանքներում է առնչվել այդ վայրերից որևէ մեկին, ինչ կարող է մտաբերել: Սովորողը համակարգում է իր ողջ տեղեկատվությունը տեքստի մեջ: Հաջորդիվ ուսուցիչը հանձնարարում է մուտք գործել համացանց և քարտեզի օգնությամբ գտնել տվյալ վայրերի տեղանքը: Սովորողները, գործադրելով ինֆորմատիկայի դասաժամին ստացած իրենց գիտելիքները, կարողանում են կատարել առաջադրանքը:

Հաջորդիվ ուսուցիչը հնարավորություն է ստեղծում, որպեսզի սովորողները ներկայացնեն իրենց աշխատանքները: Այստեղ շատ կարևոր են ուսուցչի հարցադրումները: Ավելի նպատակահարմար է, որ ուսուցիչը հետաքրքրվի, թե ի՞նչ հանգամանքներում է սովորողն առչվել այդ վայրի մասին տեղեկություններին, էլ ի՞նչ կարող է ավելացնել: Հետադարձ կապի ստեղծումը այս պարագայում շատ կարևոր է, քանի որ սովորողն ինքնանդրադարձի միջոցով կարող է գտնել իր բացթողումները: Աշխատանքի ավարտին ուսուցիչը կգրանցի հետևյալ արդյունքները.

- Սովորողը վերհիշեց աշխարհագրություն առարկայից իր գիտելքիները, ինչում նրան օգնեց մետաճանաչողությունը;
- զարգացավ նրա լեզվամտածողությունը;
- կատարեց տեքստային աշխատանք;
- վերհիշեց նկարագրական տեքստի պահանջները;
- կիրառեց ինֆորմատիկայից իր գիտելիքները գործնականում;
- կատարեց ինքնանդրադարձ, տեսավ իր առավելությունները ու թերությունները:

Կարող ենք ասել, որ մետաճանաչողությունը նման առաջադրանքների ժամանակ, թույլ է տալիս սովորողին վերհիշել ու համակարգել տեղեկատվությունը, գտնել նմանություններ ու տարբերություններ, վերլուծել, որի արդյունքում նա ավելի խորքային է պատկերացնում մի շարք երևույթներ: Մետաճանաչողության վրա մեծապես ազդում է նաև ճիշտ ժամանակին արված հետադարձ կապը: Հետադարձ

կապը, դա մի համալիր գործողությունների շղթա է, որի միջոցով հնարավոր է զգալիորեն օպտիմալացնել ուսուցման գործընթացները: Հետադարձ կապը թույլ է տալիս սովորողին շտկել սեփական սխալները, իսկ ուսուցիչն էլ հնարավորություն է ստանում համապատասխան տեղեկատվությունից պատկերացում կազմել ուսումնական գուծընթացի այն ասպեկտների մասին, որոնց պետք է վերստին անդրադառնալ և ավելի շատ ուշադրություն դարձնել:

Այս իմաստով հետադարձ կապը կարող է դրական ազդոցություն ունենալ ուսումնական գործընթացի վրա, քանի սովորողին հստակ մատնանշվում է խնդիրն ու դրա լուծման եղանակը: Մետաճանաչողության զարգացմանը մեծապես կապված է ակտիվ ուսուցման հետ: Այսպես սովորողն էլ ավելի շատ հնարավորություն է ունենու ցուցաբերել ինքնուրույնություն, ինչը շատ կարևոր է մետաճանաչողության զարգացման համար: Վերցնենք օրինակ ԳՈՒՍ փոխգործուն մեթոդը, որը բավականին լավ է աշխատում սովորողների ինքնադրսևորման տեսակետից: Դասը սկսելու շատ հայտնի հնար է նաև ԳՈՒՍ-ը: Դասասկզբում ուսուցիչը գծում է M-աձև աղյուսակ, որի ձախ սյունակում գրում է՝ գիտեմ, կենտրոնում՝ ուզում եմ իմանալ, աջ սյունակում՝ սովորեցի բառերը: Դասի թեման հայտնելուց հետո ուսուցիչը դիմում է աշակերտներին հետևյալ հարցով. ի՞նչ գիտեք այս թեմայի, հասկացության մասին: Ապա լրացվում է գիտեմ սյունակը: Հաջորդիվ աշակերտներին հարցնում է՝ ի՞նչ եք ուզում իմանալ այդ թեմայի մասին: Եվ լրացնում է ուզում եմ իմանալ սյունակը: Դասի վերջում լրացվում է սովորեցի սյունակը[3]:

ԳՈՒՍ-ը ուսուցիչներին թույլ է տալիս պատկերացում կազմել սովորողների՝ տվյալ թեմայի վերաբերյալ ունեցած նախնական գիտելիքների մասին, իսկ ահա սովորողի համար որոշակի համակարգ է ապահովվում, որի շրջանակներում նրանք կարողանում են կարդացվելիք նյութի մասին ենթադրություններ անել: Այս մեթոդի կիրառությունը հատկապես արդյունավետ է, երբ զուգորդվում է միջառարկայական կապերի ստեղծման հետ: Զարգանում են սովորողի ինքնահարցման, ինքնավերլուծության հմտությունները, նրանք սովորում են ավելի ակտիվորեն կարդալ՝ թեմային առնչվող իրենց հարցերին պատասխանները գտնելու համար:

[3] https://library.fes.de/pdf-files/bueros/georgien/16023.pdf Ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան, 2020, էջ 26:

Շատ կարևոր է նաև այն հանգամանքը, որ մեթոդական հնարի կիրառման ժամանակ սովորողներին ուղղություն է տրվում, թե ինչպես նպատակային կերպով դասակարգել արդեն ունեցած և նոր տեղեկատվությունը:

Բերենք այս մեթոդի կիրառման իրավիճակային մի օրինակ և հասկանանք՝ ինչպես դա կանդրադառնա մետաճանաչողության վրա: Օրինակը բերեք միջին դպրոցի վերաբերյալ: Ուսուցիչը կենդանիների մասին թեմայի շրջանակներում առաջարկում է մտագրոհի միջոցով գրատախտակին գրել տարբեր կենդանիների անուններ ու առաջարկում սովորողներից յուրաքանչյուրին նրա մասին ասել այն, ինչ գիտեն: Հաջորդիվ սովորողները իրենց հետաքրքրող մասին՝ ուզում եմ իմանալ, պատասխաններ են փնտրում համացանցում:

Արդյունքում՝ լրացվում է աղյուսակը՝գիտեմ, ուզում եմ իմանալ, սովորեցի: Այս առաջադրանքի կատարման ընթացքում սովորողների մեջ մեծացավ հետաքրքրությունը այս կամ այն կենդանու հանդեպ, զարգացավ մետաճանաչողությունը, քանի որ կենդանիների մասին շատ կարևոր տեղեկատվություն իմացան համացանցից՝ այդ թվում առանձնահատկություններ, նրանց հետ վարվեցողության կանոններ: Կարևոր ձեռքբերում էին նաև լեզվական գիտելիքները: Ուսուցչի համար կարևոր է սովորեցնել և նպաստել, որ սովորողը սովորածը մտապահի: Յուրաքանչյուր սովորող ունի իր ինքնաճանաչումը, և մենք չենք կարող ստիպել նրանց սովորել, բայց կարող ենք ստիպել մտածել:

Որպեսզի աշակերտները ունենան մնայուն գիտելիքներ, պետք է ուսուցանվող նյութը կրկնելու, ամրապնդելու, կիրառելու, կապակցելու հնարավորություններ ընձեռվեն: Ընդ որում՝ դա պետք է արվի կանոնավոր և շարունակական ձևով: Այլ կերպ ասած՝ պետք է կարևորել ոչ միայն ուսումնական ծրագրի ընդգրկումը, այլև խորությունը:
Ուսուցիչը, նկատելով աշակերտների դրսևորած ընդունակությունները, պետք է ուղղորդի հասնելու լիարժեքության, ինքնադրսևորման և ինքնաբավարարման: Այս ձևով զարգանում են նաև մտածողությունը, երևակայությունը: Ասենք նաև, որ դասը պետք է պլանավորել այնպես, որ տվյալ թեման ունենա դաստիարակչական, բարոյական, մարդասիրական, անհատի ձևավորման, բնության նկատմամբ

բարեխիղճ վերաբերմունքի, հայրենասիրության զգացումի , մասնագիտության գիտակցված ընտրության կողմնորոշում: Աշխարհի մասին պատկերացումները, բարոյական հայացքները և համոզմունքները, մտածելակերպը և աշխարհայացքը, հետաքրքրությունները, ձգտումները և արժեքները պայմանավորվում են խմբային գիտակցության առանձնահատկություններով, որում անձը ձևավորվում է և որում ընթանում է նրա առօրյա գործունեությունը: Ուստի ուսուցչի շատ կարևոր հանգամանք է , որ դասավանդմանը զուգահեռ ուսուցիչը կարողանա սովորողի մոտ զարգացնել նաև արժեքային համակարգ: Ուսուցման դաստիարակչական ներգործությունն անխուսափելի է, որովհետև սովորողների համար ուսուցումը գործունեության հիմնական տեսակն է, դրա համար էլ այն կարևոր դեր է կատարում նրանց անձի ձևավորման գործում:

1.2 Միջառարկայական կապերի ստեղծման ներգործությունը սովորողի աշխարհաճանաչողության և աշխարհընկալման վրա

Միջառարկայական կապերը ուսուցման գործընթացում իրականացնում են մեթոդոլոգիական, կրթական, զարգացնող, դաստիարակչական, կառուցողական գործառույթներ: Ուսուցիչը միջառարկայական կապերի միջոցով նպաստում է սովորողների գիտելիքների ինտեգրմանը, բազմակողմանի զարգացմանը, ինտելեկտի կատարելագործմանը, մտահորիզոնի ընդարձակմանը:

Միջառարկայական կապերը խթանում են սովորողների՝ դիտարկելու, հետազոտելու, հայտնագործելու, ստեղծագործելու, եզրահանգելու կարողությունների ձևավորմանը: Միջառարկայական կապերի իրականացման ձև են ինտեգրված դասերը: Ինտեգրված դասը պահանջում է կրթության գործընթացի մասնակիցների՝ ուսուցիչների, սովորողների, ծնողների, վարչական աշխատողների համագործակցությունը: Հանրակրթական դպրոցում աշխատուղ յուրաքանչյուր ուսուցիչ պարտավոր է ոչ միայն գերազանց տիրապետել իր մասնագիտությանը որպես մանկավարժ, այլև որոշակի ինֆորմացիոն պաշարներ ունենալ նաև հարակից առարկաններից:

Միջառարկայական կապերի իրագործումը ակտիվացնում է աշակերտների մտածողությունը, զարգացնում տրամաբանական մտածողությունը, նպաստում ճանաչողական կարողությունների ակտիվացմանը, սրա իրագոծումը հնարավորություն է ստեղծում կրկնել կամ վերհիշել կամ ձեռք բերել նոր տեղեկություններ, կամ գիտելիքներ նյութական աշխարհի օրինաչափությունների մասին տարբեր առարկաներից:

Միջառարկայական կապեր իրագործվում են և' դասի ընթացքում, և' արտաժամյա պարապմունքների և' էքսկուրսիաների ընթացքում, նման ձևով ուսուցիչը կենտրոնացնում է համարյա բոլոր առարկաներից ստացած գիտելիքները: Ինտեգրված ուսուցումը, հիմնվելով հատուկ և ընդհանուր կրթության սկզբունքների վրա, պետք է ունենա զարգացնող, դաստիարակող բնութագիր, որը ենթադրում է

սովորողների բարոյական գաղափարների, վարքի համարժեք ձևերի մշակում՝ բոլոր մասնակիցների ներառմամբ կրթական գործընթացում[4]:
Կրթության կարևորությունը գնահատելով՝ պետք է ընդունենք, որ կրթության միջոցով կարելի է հասնել հասարակական մտածողության, հոգևոր-բարոյական և մշակութային արժեքների զարգացման: Ինտեգրված ուսուցումը, ապահովելով տարբեր առարկաների գիտելիքների համակցումը, նպաստելու է հետազոտական հմտությունների, ստեղծագործական կարողությունների ձևավորմանը և դրանց հիմքի վրա նրանց կայուն զարգացման իրականացանը: Երկու ուսուցիչներ պարզում և որոշում են իրենց առարկաների համատեղ հետաքրքրությունը:

Այստեղ շատ կարևոր է ուսուցիչների փոխգործունեության ճիշտ կազմակերպումը, քանի որ նրանցից յուրաքանչյուրի գործողությունների հաջորդականության արդյունավետությունից է կախված ինտեգրված դասի որակը: Ինդեգրված դասի ժամանակ ինտեգրվող առարկաների բաղադրիչները կարող են լինել ավել կամ պակաս: Ցանկացած ինտեգրված դաս նպատակ ունի դուրս գալու մեկ առարկայի նեղ շրջանակներից: Բերենք ինտեգրված դասի մեկ օրինակ.

ԻՆՏԵԳՐՎԱԾ ԴԱՍ

Հայոց պատմություն և ինֆորմատիկա առարկաներից

Դասի թեման

- **Հայոց պատմություն՝** «Հայոց ցեղասպանություն»
- **Ինֆորմատիկա՝** «Microsoft Word» տեքստային խմբագրիչ

Դասի նպատակը

- *Կարողանալ աշխատել* «Microsoft Word» տեքստային խմբագրիչով
- *Կարողանալ համացանցից գտնել օգտակար տեղեկատվություն հանձնարարված թեմայի վերաբերյալ*
- *Պատրաստել հետազոտական աշխատանք* «Հայոց ցեղասպանություն» թեմայով և ներկայացնել

[4] Екжанова Е. А. Резникова Е. В. Основы интегрированного обучения: Учебное пособие для вузов, Москва. 2008, стр.52.

Դասին կկիրառվի խմբային աշխատանք

Համացանցային բաց հարթակներից, էլեկտրոնային գրքերից հավաքագրված տեղեկությունների հիման վրա սովորողներին կառաջարկվի կազմել հետազոտական աշխատանքներ թեմայի վերաբերյալ՝ օգտվելով **«Microsoft Word»** տեքստային խմբագրիչից: Նախօրոք կազմված խմբերը կաշխատեն հավաքել տեղեկատվություն և **«Microsoft Word»** տեքստային խմբագրիչի միջոցով կատարել աշխատանքը: Խմբերը կներկայացնեն իրենց աշխատանքները հերթով: Դասի ավարտին կստանանք հետևյալ արդյունքները՝

- Սովորողները կխորացնեն իրենց գիտելիքները հայոց պատմություն առարկայից,
- Համացանցում կկարողանան կառավարել տեղեկատվական հոսքերը՝ գտնելով արժանահավատ աղբյուրներ,
- Կհմտանան **«Microsoft Word»** տեքստային խմբագրիչի գործածության մեջ,
- Կկարողանան տարբերել կարևոր և երկրորդական տեղեկատվությունը,
- Կսովորեն օգտվել էլեկտրոնային գրադարաններից:

Դասի ընթացքում կարելի է ինտեգրել մանկավարժական գործընթացի ցանկացած բաղադրիչ՝ նպատակ, բովանդակություն, ուսուցման մեթոդ և միջոց:

Այսպիսով, կարծում ենք, որ ինտեգրված դասերի կազմակերպման ընթացքը բավականաչափ արդյունավետ կարող է լինել մասնակից ուսուցիչների համար: Սա համագործակցման ու փորձի փոխանակման անմիջական գործընթաց է, որի ժամանակ բոլոր ուսուցիչները հավասարաչափ ջանք են գործադրում, որպեսզի ուսուցման գործընթացը լինի աարդյունավետ: Ինտեգրված դասերի կազմակերպման ընթացքը բավականաչափ արդյունավետ կարող է լինել մասնակից ուսուցիչների համար: Սա համագործակցման ու փորձի փոխանակման անմիջական գործընթաց է, որի ժամանակ բոլոր ուսուցիչները հավասարաչափ ջանք են գործադրում, որպեսզի ուսուցման գործընթացը լինի աարդյունավետ:

Կցանկանայինք ավելացնել նաև, որ սույն աշխատանքի վրա հենվելով՝ կփորձենք զարգացնել մեր սովորողների մետաճանաչողությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կրթական համակարգում շարունակաբար կատարվող բարեփոխումները պահանջում են նոր մեթոդոլոգիական մոտեցում կազմակերպչական և բովանդակային նշանակության խնդիրների լուծման ժամանակ, որը կնպաստի կրթության որակի բարձրացմանը: Կարևորելով ուսուցման գործընթացի ճիշտ կազմակերպման նշանակությունը՝ կցանկանանք ևս մեկ անգամ կարևորել միջառարկայական կապերի դերը սովորողների մետաճանաչողության զարգացման համար: Միջառարկայական կապերի օգտագործումը առավել դյուրին են դարձնում այս գործընթացը, քանի որ սովորողն այդ ակտիվ միջավայրում լիարժեք կարող է բավարարել իր հետաքրքրությունները, գտնել իրեն հուզող հարցերի պատասխանները: Որպեսզի սովորողները բարգավաճեն ,նրանք պետք է հնարավորություն ունենան անցում կատարելու բացասական<< Ես չեմ կարող>>ից դեպի ակտիվ<< Ինչպե՞ս կարող եմ>>: Դա անելու համար նրանք պետք է մտածեն այն մասին,թե ինչն է նրան հիասթափեցնում,ինչն է անհրաժեշտ նրանց անխռով մնալու համար: Նրանք պետք է մտածեն իրենց իսկ մտածողության մասին: Կարծում ենք, որ այստեղ մեծ է հատկապես ուսուցչի դերը: Այն ուսուցիչները, ովքեր ավելի փորձառու են, անուշտ, տեղյակ են ավելի հետաքրքիր, արդյունավետ և համարձակ դասավանդման մեթոդներին: Այս պարագայում հավանականությունն ավելի մեծ է, որ վերջիններս կարող են կառուցել արդյունավետ անհատական դասեր և ապահովել շարունակական ուսուցում: Նրանք ի վիճակի են կազմել և ընտրել դասավանդման այնպիսի մեթոդներ և միջոցառումներ, որոնց միջոցով համապատասխանաբար զարգացվում են աշակերտների ըմբռնումը, մտածողությունը, ինչպես նաև մետաճանաչողությունը:Մինչև հետազոտություն իրականացնելը 7-րդ դասարանի աշակերտների մոտ հետաքրքրվածությունը առարկայի հանդեպ ոչ այնքան արտահայտված էր,մի քանի աշակերտի մոտ կար ցածր առաջադիմություն:Ելնելով հետազոտության արդյունքներից ,եկա այն եզրակացության, որ միջառարկայական

կապը հանգեցրեց մի քանի առարկաների նկատմամբ հետաքրքրության բարձրացման,շահագրգռության և առաջադիմության բարձր մակարդակ: Ուստի միջառարկայական կապը շատ արդյունավետ էր դասապրոցեսի ժամանակ կիրառելը և գտնում եմ ,որ արդյունքը գոհացուցիչ էր:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հիմք ընդունելով հետազոտության ընթացքում կատարած արձանագրումները՝ բերենք մի քանի առաջարկություններ.

ա/ Միջառարկայական կապերի ստեղծման համար ավելի բարենպաստ պայմաններ կարող են ստեղծել արտադասարանական պարապմունքները, ուստի նպատակահարմար կլինի նմանօրինակ դասեր էլ ավելի շատ անցկացնել:

բ/ Ցանկալի է, որ դասերի ընթացքում սովորողի համար դրվեն այնպիսի խնդիրներ, որոնք կստիպեն վերջինիս մտածել, լուծումներ գտնել ինքնուրույն: Այսպես կարելի է բարձրացնել սովորողի աշխատունակությունն ու հիմք նախապատրաստել մետաճանաչողության զարգացման համար:

գ./ Պետք է ամեն կերպ խրախուսել ուսուցիչների համագործակցությունը ինտեգրված դասերի անցկացման շրջանակներում:

դ/Սովորողին ինքնուրույնություն տալով՝ մենք ապահովագրում ենք նրա բարեկեցիկ ապագան, ուստի աշակերտակենտրոն աշխատելաոճը պետք է գերակայի:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Екжанова Е. А. Резникова Е. В. Основы интегрированного обучения: Учебное пособие для вузов, Москва. 2008.
2. И. П. Подласый. Педагогика начальной школы, Москва, 2000.
3. http://geopolitika.am/dir/wp-content/blogs.dir/1/files/2021_6_117_119.pdf Մետաճանաչողությունը կրթության մեջ: